1. Ժամ աղոթքի, ժամ աղոթքի,
Որ աշխարհէս զիս կզատէ,
Որ Հօրըս աթոռին դիմեմ
Ու իմ կարօտութիւնս յայտնեմ:
Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ,
Հոգիս հանգիստ միշտ կը գտնէ,
Փորձութենէ ալ կազատի
Քո հասնելովդ, ժամ աղոթքի:

2. Ժամ աղոթքի, ժամ աղոթքի,
Աղերսըս թևերովդ տարուի
Ծնորհաց աթոռը Նստողին՝
Զղջացեալի ձայնն լսողին:
Իրեն դիմել կպատուիրէ,
Ծնորհք խնդրել կհրաւիրէ,
Հոգերս Անոր ձգեմ պիտի,
Քեզ սպասեմ, ժամ աղոթքի:

3. Ժամ աղոթքի, ժամ աղոթքի,
Մխիթարիչ ըլլաս ինծի,
Մինչև Փասգա լեռնէն նայիմ,
Տեսնեմ իմ տունս երկնային:
Տկար մարմինս պիտի ձգեմ,
Տիրոջը քով պիտի ելլեմ
Ու երթալով երգեմ պիտի.
«Ժամ աղոթքի, ժամ աղոթքի»: